ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2013 թվականի դեկտեմբերի 12-ին

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(վերնագիրը փոփ. 23.03.18 ՀՕ-209-Ն)

Հոդված 6. Պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց աշխատավարձի կառուցվածքը

(վերնագիրը փոփ. 23.03.18 ՀՕ-209-Ն)

1. Պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց աշխատավարձը կազմված է սույն օրենքով սահմանված հիմնական աշխատավարձից, լրացուցիչ աշխատավարձից և պարգևատրումներից: Լրացուցիչ աշխատավարձը ներառում է հավելումները և հավելավճարները:

2. Պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց լրացուցիչ աշխատավարձը չի կարող գերազանցել հիմնական աշխատավարձի 30 տոկոսը:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված սահմանափակումը կիրառելիս արտաժամյա և գիշերային աշխատանքների համար տրվող հավելումները հաշվարկվում են ֆինանսական տարվա կտրվածքով՝ պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց տարեկան հիմնական աշխատավարձի նկատմամբ:

4. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված լրացուցիչ աշխատավարձի հաշվարկում չեն ներառվում բարձրլեռնային վայրերում աշխատելու համար տրվող հավելումները:

5. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված սահմանափակումը չի տարածվում Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության համակարգերում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների, արտաքին հետախուզության ծառայության, քրեակատարողական ծառայության և փրկարար ծառայության ծառայողների, առանձնակի ռիսկային և մասնագիտացում պահանջող, ինչպես նաև Սահմանադրական դատարանի նախագահի, փոխնախագահի և դատավորի, վճռաբեկ դատարանի դատավորի (այդ թվում՝ վճռաբեկ դատարանի նախագահի և վճռաբեկ դատարանի պալատի նախագահի) պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ:

6. Պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց պարգևատրումը կարող է իրականացվել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված պարգևատրման ֆոնդից, աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոցներից, տվյալ մարմնի աշխատանքների փորձարարական կազմակերպման համար օպտիմալացված միջոցներից, ինչպես նաև օրենքով չարգելված այլ աղբյուրներից: ***(նախադասությունը հանվել է 14.11.19 ՀՕ-250-Ն)***

(6-րդ հոդվածը փոփ. 11.06.14 ՀՕ-57-Ն, փոփ., լրաց. 23.03.18 ՀՕ-209-Ն, փոփ. 14.11.19 ՀՕ-250-Ն, լրաց. 24.03.21 ՀՕ-152-Ն, 09.06.22 ՀՕ-264-Ն)

Հոդված 8. Պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց տրվող հավելումները և դրանց չափը

(վերնագիրը փոփ. 23.03.18 ՀՕ-209-Ն)

1. Բարձրլեռնային վայրերում, ծանր, վնասակար, առանձնապես ծանր, առանձնապես վնասակար աշխատանքներ կատարելու դեպքերում պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց տրվում է հավելում, որի չափը և վճարման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2. Արտաժամյա, գիշերային ժամերին, հանգստյան, տոնական օրերին աշխատելու համար պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց տրվում է հավելում Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված նվազագույն չափերով, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ և 3.1-ին մասերով նախատեսված դեպքերի:

3. Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության համակարգերում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողներին, արտաքին հետախուզության, քրեակատարողական և փրկարար ծառայության ծառայողներին արտաժամյա, գիշերային ժամերին, հանգստյան, տոնական օրերին աշխատանքի համար հավելումներ չեն տրվում, եթե դրանք չեն կարգավորվում սույն օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ մասով:

3.1. Դատախազին և քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց արտաժամյա, գիշերային ժամերին, հանգստյան, տոնական օրերին աշխատանքի համար հավելումներ չեն տրվում: Առանձնակի ռիսկային և մասնագիտացում պահանջող պաշտոն զբաղեցնող անձանց արտաժամյա, գիշերային ժամերին, հանգստյան, տոնական օրերին աշխատանքի համար հավելումներ չեն տրվում, եթե դրանք չեն կարգավորվում սույն օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասով:

4. ***(մասն ուժը կորցրել է 19.10.16 ՀՕ-168-Ն)***

5. Բացառությամբ Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության համակարգերում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների, արտաքին հետախուզության ծառայության, քրեակատարողական ծառայության և փրկարար ծառայության ծառայողների, առանձնակի ռիսկային և մասնագիտացում պահանջող, ինչպես նաև վճռաբեկ դատարանի դատավորի (այդ թվում՝ վճռաբեկ դատարանի նախագահի և վճռաբեկ դատարանի պալատի նախագահի) պաշտոն զբաղեցնող անձանց, պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց վճարվող հավելումների ընդհանուր չափը չի կարող գերազանցել սույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով

սահմանված չափը՝ հաշվի առնելով սույն օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով նախատեսված առանձնահատկությունները:

(8-րդ հոդվածը փոփ., լրաց. 11.06.14 ՀՕ-57-Ն, փոփ. 19.10.16 ՀՕ-168-Ն, 23.03.18 ՀՕ-209-Ն, 21.01.20 ՀՕ-20-Ն, փոփ., լրաց. 24.03.21 ՀՕ-152-Ն, լրաց. 09.06.22 ՀՕ-264-Ն)

(21.01.20 ՀՕ-20-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Գ Լ ՈՒ Խ 4

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂՆԵՐԻ, ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ~~ԵՎ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ,~~ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

(վերնագիրը լրաց. 11.06.14 ՀՕ-57-Ն, խմբ. 21.01.20 ՀՕ-20-Ն, փոփ. 24.03.21 ՀՕ-152-Ն)

(21.01.20 ՀՕ-20-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Հոդված 16. Զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների, արտաքին հետախուզության, քրեակատարողական և փրկարար ծառայության ծառայողների վարձատրությունը (դրամական ապահովությունը)

1. Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության համակարգերում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների (այսուհետ նաև՝ զինծառայող), քրեակատարողական և փրկարար ծառայության ծառայողների պաշտոնային դրույքաչափը որոշվում է բազային աշխատավարձի և սույն հոդվածի 2-րդ մասում նշված համապատասխան հավելվածներով սահմանված՝ նրանց պաշտոնի խմբի (ենթախմբի) սանդղակում՝

համապատասխանաբար զինվորական, փրկարար կամ քրեակատարողական ծառայության ստաժին համապատասխանող գործակցի արտադրյալով:

2. Պաշտպանության նախարարության համակարգում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցները սահմանվում են հավելված 3-ով, ազգային անվտանգության ծառայության համակարգում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողներինը՝ հավելված 4-ով, ոստիկանության համակարգում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողներինը՝ հավելված 5-ով, Ազգային անվտանգության ծառայության պետական պահպանության ծառայության զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողներինը՝ հավելված 6-ով, քրեակատարողական ծառայողների պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցները սահմանվում են հավելված 7-ով, փրկարար ծառայության ծառայողներինը՝ հավելված 8-ով:

2.1. ***(մասն ուժը կորցրել է 23.03.18 ՀՕ-209-Ն)***

2.2. Արտաքին հետախուզության ծառայության ծառայողների պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցները սահմանվում են սույն օրենքի 1-ին հավելվածով:

3. Սույն օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի, 19-րդ հոդվածի 1.1-ին, 2-րդ, 3-րդ, 3.1-ին, 3.2-րդ, 4-րդ մասերով, 20-րդ հոդվածով, 21-րդ հոդվածով, 22-րդ հոդվածի 1-8-րդ մասերով, 25-րդ հոդվածով սահմանված դրույթները չեն տարածվում Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության համակարգերում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների, քրեակատարողական և փրկարար ծառայության ծառայողների վարձատրության հետ կապված հարաբերությունների վրա: Սույն օրենքի 24-րդ հոդվածով սահմանված դրույթները չեն տարածվում Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության համակարգերում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների, քրեակատարողական և փրկարար ծառայության ծառայողների վրա:

4. Զինծառայողներին, քրեակատարողական և փրկարար ծառայության ծառայողներին կոչման համար հավելավճար չի տրվում:

5. Զինված ուժերում, ազգային անվտանգության մարմիններում, ոստիկանությունում, արտաքին հետախուզության, քրեակատարողական և փրկարար ծառայություններում, ծառայության առանձնահատկություններով պայմանավորված, տրվում են հավելումներ, որոնց վճարման դեպքերը, չափերը և կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

6. Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության, քրեակատարողական և փրկարար ծառայությունների կադրերի ռեզերվում (կադրերի տրամադրության տակ) գտնվելու դեպքում վարձատրության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով:

(16-րդ հոդվածը խմբ., լրաց., փոփ. 11.06.14 ՀՕ-57-Ն, փոփ. 06.12.17 ՀՕ-245-Ն, 23.03.18 ՀՕ-209-Ն)

Հավելված 1

«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքի

(գլխագիրը փոփ. 23.03.18 ՀՕ-209-Ն, 13.09.19 ՀՕ-182-Ն)

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆ ԵՎ ԱՅԼ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԸ

(վերնագիրը փոփ. 11.06.14 ՀՕ-57-Ն, խմբ. 23.03.18 ՀՕ-209-Ն)

	Պաշտոնի անվանումը	**Գործակիցը**
	1	2
	Հանրապետության նախագահ	20.00
	Վարչապետ	19.00

	Ազգային ժողովի նախագահ	18.00
	Սահմանադրական դատարանի նախագահ	16.00
	Բարձրագույն դատական խորհրդի նախագահ	16.00
	(փողը հանվել է 08.05.19 ՀՕ-32-Ն)	
	Փոխվարչապետ	15.50
	Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար	15.50
	Մարդու իրավունքների պաշտպան	15.00
	Վճռաբեկ դատարանի նախագահ	15.00
	Հաշվեքննիչ պալատի նախագահ	15.00
	Գլխավոր դատախազ	15.00
	Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ	14.50
	Ազգային ժողովի նախագահի տեղակալ	14.00
	Ինքնավար մարմնի նախագահ	14.00
	Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալ	14.00
	Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ	14.00
	Գլխավոր դատախազի՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթների ոլորտը համակարգող տեղակալ	12.50
	Վճռաբեկ դատարանի պալատի նախագահ	12.00
	Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահ	12.00
	Նախարար	12.00
	Ազգային անվտանգության ծառայության տնօրեն	12.00
	Ոստիկանության պետ	12.00
	Պետական եկամուտների կոմիտեի նախագահ	12.00
	Պետական վերահսկողության ծառայության ղեկավար	12.00

	Արտաքին հետախուզության ծառայության պետ	12.00
	ՀՈՒ գլխավոր շտաբի պետ	12.00
	(փողն ուժը կորցրել է 13.09.19 ՀՕ-182-Ն)	
	Սահմանադրական դատարանի դատավոր	12.00
	Բարձրագույն դատական խորհրդի անդամ	12.00
	(փողը հանվել է 24.03.21 ՀՕ-152-Ն)	
	Քննչական կոմիտեի նախագահ	12.00
	Ինքնավար մարմնի անդամ	12.00
	Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալ	12.00
	Կենտրոնական ընտրական հանձնաժողովի քարտուղար	12.00
	Վերաքննիչ դատարանի նախագահ	11.50
	Վճռաբեկ դատարանի դատավոր	11.50
	Վարչական դատարանի նախագահ	11.00
	Առաջին ատյանի դատարանի նախագահ	11.00
	Վերաքննիչ դատարանի դատավոր	11.00
	Գլխավոր դատախազի տեղակալ	11.00
	Գլխավոր ռազմական տեսուչ	10.50
	Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ	10.50
	Հատուկ հանձնարարություններով դեսպան	10.50
	Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատար	10.50
	Միջազգային իրավական հարցերով ներկայացուցիչ	11.50
	Պետական պահպանության ծառայության պետ	10.00
	Քրեակատարողական ծառայության պետ	10.00

	Փրկարար ծառայության տնօրեն	10.00
	Դատական ակտերի գլխավոր հարկադիր կատարող	10.00
	Ազգային ժողովի պատգամավոր	10.00
	Դատական դեպարտամենտի ղեկավար	10.00
	Անկախ պետական մարմնի նախագահ	10.00
	Մարզպետ	10.00
	Հաշվեքննիչ պալատի անդամ	10.00
	Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ	10.00
	Նախարարի առաջին տեղակալ	10.00
	Կառավարությանն ենթակա մարմնի ղեկավար	10.00
	Ազգային անվտանգության ծառայության տնօրենի առաջին տեղակալ	10.00
	Ոստիկանության պետի առաջին տեղակալ	10.00
	Պետական եկամուտների կոմիտեի նախագահի առաջին տեղակալ	10.00
	ՀՈՒ գլխավոր շտաբի պետի առաջին տեղակալ	10.00
	Վարչական դատարանի դատավոր	10.00
	Առաջին ատյանի դատարանի դատավոր	10.00
	(փողն ուժը կորցրել է 13.09.19 ՀՕ-182-Ն)	
	Նախարարությանը ենթակա մարմնի ղեկավար	9.00
	Երևան քաղաքի դատախազ	9.00
	Նախարարի տեղակալ	8.50
	Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի դեպարտամենտի ղեկավար	8.50
	(փողը հանվել է 24.03.21 ՀՕ-152-Ն)	

	Քննչական կոմիտեի նախագահի տեղակալ, զինվորական քննչական գլխավոր վարչության պետ	8.50
	Ազգային անվտանգության ծառայության տնօրենի տեղակալ	8.50
	Ոստիկանության պետի տեղակալ	8.50
	Պետական պահպանության ծառայության պետի առաջին տեղակալ	8.50
	Պետական վերահսկողության ծառայության ղեկավարի տեղակալ	8.50
	Արտաքին հետախուզության ծառայության պետի տեղակալ	8.50
	Պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ	8.50
	ՀՈՒ գլխավոր շտաբի պետի տեղակալ	8.50
	Գլխավոր ռազմական տեսուչի առաջին տեղակալ	8.50
	Քրեակատարողական ծառայության պետի առաջին տեղակալ	8.50
	Անկախ պետական մարմնի նախագահի տեղակալ	8.00
	(պարբերությունը հանվել է 14.07.22 ՀՕ-313-Ն)	
	Վիճակագրության պետական խորհրդի անդամ-վիճակագրական կոմիտեի նախագահի տեղակալ	8.00
	Կառավարությանն ենթակա մարմնի ղեկավարի առաջին տեղակալ	8.00
	Մարզպետի տեղակալ	8.00
	Մարզի դատախազ	8.00
	Կայազորի զինվորական դատախազ	8.00
	Պետական պահպանության ծառայության պետի տեղակալ	7.50
	Քրեակատարողական ծառայության պետի տեղակալ	7.50
	Փրկարար ծառայության տնօրենի տեղակալ	7.50
	Գլխավոր ռազմական տեսուչի տեղակալ	7.50

	Գլխավոր հարկադիր կատարողի տեղակալ	7.50
	Անկախ պետական մարմնի անդամ	7.50
	Կառավարությանը ենթակա մարմնի ղեկավարի տեղակալ	7.50
	Վիճակագրության պետական խորհրդի անդամ	7.50
	Վարչապետի աշխատակազմ	
	Վարչապետի աշխատակազմի ղեկավար	12.00
	Վարչապետի գլխավոր խորհրդական	11.00
	Վարչապետի աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալ	10.00
	Վարչապետի խորհրդական	10.00
	Ազգային անվտանգության խորհրդի գրասենյակի ղեկավար	10.00
	Փոխվարչապետի գրասենյակի ղեկավար	10.00
	Քաղաքացիական ծառայության գրասենյակի ղեկավար	10.00
	Տեսչական մարմինների գրասենյակի ղեկավար	10.00
	Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի ղեկավար	10.00
	Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակի ղեկավար	10.00
	Վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալ	9.50
	Վարչապետի արարողակարգի պատասխանատու	9.00
	Վարչապետի մամուլի քարտուղար	9.00
	Վարչապետի օգնական	9.00
	Փոխվարչապետի խորհրդական	9.00
	Վարչապետի ռեֆերենտների խմբի ղեկավար	8.50
	Փոխվարչապետի օգնական	7.50
	Փոխվարչապետի մամուլի քարտուղար	7.50
	Վարչապետի ռեֆերենտ	7.00

	Փոխվարչապետի արարողակարգի պատասխանատու	6.50
	Փոխվարչապետի ռեֆերենտ	5.50
	Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի խորհրդական	7.00
	Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի օգնական	6.00
	Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի մամուլի քարտուղար	6.00
	Վարչապետի աշխատակազմի ղեկավարի օգնական	4.50
	Ազգային ժողովի աշխատակազմ	
	Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար	12.00
	Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալ	10.00
	Ազգային ժողովի նախագահի խորհրդական	9.50
	Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի տեղակալ	8.50
	Ազգային ժողովի նախագահի օգնական	8.00
	Ազգային ժողովի նախագահի մամուլի քարտուղար	8.00
	Ազգային ժողովի նախագահի ռեֆերենտ	6.00
	Ազգային ժողովի նախագահի տեղակալի խորհրդական	5.50
	Ազգային ժողովի նախագահի տեղակալի օգնական	5.00
	Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի օգնական	4.50
	Ազգային ժողովի խմբակցության փորձագետ	4.50
	Ազգային ժողովի պատգամավորի վճարովի հիմունքներով օգնական	3.00
	Հանրապետության նախագահի աշխատակազմ	
	Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավար	11.00

	Հանրապետության նախագահի խորհրդական	9.50
	Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ	8.50
	Հանրապետության նախագահի մամուլի քարտուղար	8.00
	Հանրապետության նախագահի օգնական	8.00
	Հանրապետության նախագահի ռեֆերենտ	6.00
	Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարի օգնական	4.50
	Սահմանադրական դատարանի աշխատակազմ	
	Սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավար	10.00
	Սահմանադրական դատարանի նախագահի խորհրդական	9.00
	Սահմանադրական դատարանի նախագահի օգնական	7.50
	Սահմանադրական դատարանի մամուլի քարտուղար	7.50
	Դատախազություն	
	Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող վարչության պետ	10.00
	Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող վարչության պետի տեղակալ	9.50
	Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող վարչության ավագ դատախազ	9.25
	Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող վարչության դատախազ	9.00
	Գլխավոր դատախազության վարչության պետ, զինվորական դատախազի տեղակալ	9.00

	Երևան քաղաքի վարչական շրջանի դատախազ	8.00
	Գլխավոր դատախազության բաժնի պետ	7.50
	Գլխավոր դատախազության վարչության պետի տեղակալ, գլխավոր դատախազության ավագ դատախազ, Երևան քաղաքի դատախազի տեղակալ	7.25
	Գլխավոր դատախազության վարչության, ինչպես նաև բաժնի ավագ դատախազ, մարզի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազի տեղակալ, զինվորական կենտրոնական դատախազության բաժնի պետ	7.00
	Գլխավոր դատախազության դատախազ, գլխավոր դատախազության վարչության, ինչպես նաև բաժնի դատախազ, զինվորական կենտրոնական դատախազության ավագ դատախազ	6.75
	Երևան քաղաքի դատախազության ավագ դատախազ, զինվորական կենտրոնական դատախազության բաժնի ավագ դատախազ	6.50
	Երևան քաղաքի դատախազության դատախազ, մարզի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազությունների ավագ դատախազներ, զինվորական կենտրոնական դատախազության դատախազ, զինվորական կենտրոնական դատախազության բաժնի դատախազ	6.25
	Մարզի, Երևան քաղաքի տարածքների, կայազորի զինվորական դատախազության դատախազ	6.00
	Գլխավոր դատախազի խորհրդական	5.50
	Գլխավոր դատախազի օգնական	4.50

	Գլխավոր դատախազի մամուլի քարտուղար	4.50
	Գլխավոր դատախազի տեղակալի օգնական	4.00
	Դատական դեպարտամենտ	
	Դատավորի (այդ թվում՝ Սահմանադրական դատարանի դատավորի) օգնական	3.88
	Հակակոռուպցիոն կոմիտե	
	Հակակոռուպցիոն կոմիտեի վարչության, այդ թվում՝ տարածքային վարչության պետ	8.00
	Հակակոռուպցիոն կոմիտեի վարչության, այդ թվում՝ տարածքային վարչության պետի տեղակալ, Հակակոռուպցիոն կոմիտեի հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ	7.75
	Հակակոռուպցիոն կոմիտեի հատկապես կարևոր գործերով քննիչ, Հակակոռուպցիոն կոմիտեի բաժնի պետ	7.50
	Հակակոռուպցիոն կոմիտեի բաժնի պետի տեղակալ, Հակակոռուպցիոն կոմիտեի ավագ քննիչ	7.25
	Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչ	7.00
	Հակակոռուպցիոն կոմիտեի ավագ օպերլիազոր	5.00
	Հակակոռուպցիոն կոմիտեի օպերլիազոր	4.50
	Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի խորհրդական	5.00
	Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի մամուլի քարտուղար	5.00
	Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի օգնական	4.50
	Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալի օգնական	3.50
	(փողը հանվել է 24.03.21 ՀՕ-152-Ն)	

	(փողը հանվել է 24.03.21 ՀՕ-152-Ն)	
	(փողը հանվել է 24.03.21 ՀՕ-152-Ն)	
	(փողը հանվել է 24.03.21 ՀՕ-152-Ն)	
	(փողը հանվել է 24.03.21 ՀՕ-152-Ն)	
	Արտաքին հետախուզության ծառայություն	
Ենթախումբը		
3	Բարձագույն պաշտոններ	7.50
1	Գլխավոր պաշտոններ	6.80
2		6.40
3		6.20
1	Ավագ պաշտոններ	5.60
2		5.40
3		5.00
1	Միջին պաշտոններ	4.50
2		4.25
3		4.00
1	Կրտսեր պաշտոններ	3.80
2		3.60
3		3.50
	Քննչական կոմիտե	
	Քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի գլխավոր վարչության պետ, զինվորական քննչական գլխավոր վարչության պետի տեղակալ, Երևան քաղաքի քննչական վարչության պետ	8.00
	Քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի գլխավոր	7.00

	վարչության վարչության պետ, քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի վարչության պետ, քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի գլխավոր վարչության պետի տեղակալ, զինվորական քննչական գլխավոր վարչության վարչության պետ, Երևան քաղաքի քննչական վարչության պետի տեղակալ, մարզային քննչական վարչության պետ	
	Քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի բաժնի պետ, քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի վարչության պետի տեղակալ, քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի գլխավոր վարչության վարչության պետի տեղակալ (հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ), զինվորական քննչական գլխավոր վարչության վարչության պետի տեղակալ (հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ), զինվորական քննչական գլխավոր վարչության կայազորային քննչական բաժնի պետ, Երևան քաղաքի քննչական վարչության բաժնի պետ, Երևան քաղաքի վարչական շրջանի քննչական բաժնի պետ, մարզային քննչական վարչության պետի տեղակալ, քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի գլխավոր վարչության վարչության հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ, զինվորական քննչական գլխավոր վարչության վարչության հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ	6.75
	Քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի բաժնի պետի տեղակալ, Երևան քաղաքի քննչական վարչության բաժնի պետի տեղակալ (հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ), Երևան քաղաքի վարչական շրջանի քննչական	6.50

	բաժնի պետի տեղակալ, մարզային քննչական վարչության քննչական բաժնի պետ, զինվորական քննչական գլխավոր վարչության կայազորային քննչական բաժնի պետի տեղակալ, քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի գլխավոր վարչության վարչության հատկապես կարևոր գործերով քննիչ, քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի վարչության հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ, զինվորական քննչական գլխավոր վարչության վարչության հատկապես կարևոր գործերով քննիչ, Երևան քաղաքի քննչական վարչության բաժնի հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ, մարզային քննչական վարչության հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ	
	Քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի վարչության հատկապես կարևոր գործերով քննիչ, քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի բաժնի հատկապես կարևոր գործերով քննիչ, Երևան քաղաքի քննչական վարչության բաժնի հատկապես կարևոր գործերով քննիչ	6.25
	Զինվորական քննչական գլխավոր վարչության կայազորային քննչական բաժնի հատկապես կարևոր գործերով քննիչ, Երևան քաղաքի վարչական շրջանի քննչական բաժնի հատկապես կարևոր գործերով քննիչ, մարզային քննչական վարչության հատկապես կարևոր գործերով քննիչ, մարզային քննչական վարչության բաժնի պետի տեղակալ	6.00
	Զինվորական քննչական գլխավոր վարչության կայազորային քննչական բաժնի ավագ քննիչ, Երևան քաղաքի վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ, մարզային քննչական վարչության ավագ քննիչ	5.50

	Զինվորական քննչական գլխավոր վարչության կայազորային քննչական բաժնի քննիչ, Երևան քաղաքի վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ, մարզային քննչական վարչության քննիչ	5.00
	Մարզային քննչական վարչության քննչական բաժնի ավագ քննիչ	4.50
	Մարզային քննչական վարչության քննչական բաժնի քննիչ	4.25
	Քննչական կոմիտեի նախագահի խորհրդական	4.75
	Քննչական կոմիտեի նախագահի օգնական	4.50
	Քննչական կոմիտեի նախագահի մամուլի քարտուղար	4.50
	Քննչական կոմիտեի նախագահի տեղակալի օգնական	3.50
	Պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչություն	
	Պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչության պետ	8.00
	Պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչության պետի տեղակալ, քննչական վարչության բաժնի պետ	6.75
	Պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչության հատկապես կարևոր գործերով քննիչ	6.50
	Պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչության ավագ քննիչ	6.00
	Պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչության քննիչ	5.50
	Նախարարություններ	
	Նախարարի խորհրդական	5.50
	Նախարարի առաջին տեղակալի օգնական	4.50
	Նախարարի օգնական	4.50

	Նախարարի մամուլի քարտուղար	4.50
	Նախարարի տեղակալի օգնական	4.00
	Ինքնավար մարմիններ, անկախ պետական մարմիններ	
	Ինքնավար մարմնի, անկախ պետական մարմնի նախագահի խորհրդական	4.75
	Ինքնավար մարմնի, անկախ պետական մարմնի նախագահի օգնական	4.50
	Ինքնավար մարմնի, անկախ պետական մարմնի նախագահի տեղակալի օգնական	3.50
	Ինքնավար մարմնի, անկախ պետական մարմնի անդամի օգնական	3.00
	Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ	
	Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կանխարգելման ազգային մեխանիզմի իրականացման համակարգող	6.00
	Մարդու իրավունքների պաշտպանի խորհրդական	5.5
	Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի մարզային ստորաբաժանման ղեկավար	4.55
	Մարդու իրավունքների պաշտպանի օգնական	4.50
	Մարդու իրավունքների պաշտպանի մամուլի քարտուղար	4.50
	Կենտրոնական ընտրական հանձնաժողով	
	Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ - վերստուգիչ ծառայության պետ	6.00
	Կառավարությանը և վարչապետին ենթակա մարմիններ	
	Կառավարությանը և վարչապետին ենթակա մարմնի ղեկավարի խորհրդական	4.75

	Կառավարությանը և վարչապետին ենթակա մարմնի ղեկավարի օգնական	4.50
	Կառավարությանը և վարչապետին ենթակա մարմնի ղեկավարի տեղակալի օգնական	3.00
	Մարզպետարաններ	
	Մարզպետի խորհրդական	4.75
	Մարզպետի օգնական	4.50
	Մարզպետի տեղակալի օգնական	3.00
	Նախարարությանը ենթակա մարմին, տեսչական մարմիններ	
	Նախարարությանը ենթակա մարմնի ղեկավարի առաջին տեղակալ	7.00
	Նախարարությանը ենթակա մարմնի ղեկավարի տեղակալ	6.00
	Նախարարությանը ենթակա մարմնի, ինչպես նաև տեսչական մարմնի ղեկավարի օգնական	4.50
	Նախարարությանը ենթակա մարմնի, ինչպես նաև տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի օգնական	3.00
	Նախարարության ոլորտում ծրագրեր իրականացնող գրասենյակներ	
	Տնօրեն	7.50
	Տնօրենի տեղակալ	5.50
	Բաժնի պետ	4.48
	Գլխավոր մասնագետ	3.36
	Առաջատար մասնագետ	3.03
	Առաջին կարգի մասնագետ	2.50

	Տնօրենի խորհրդական, տնօրենի օգնական	2.00

(հավելվածը փոփ., լրաց. 11.06.14 ՀՕ-57-Ն, փոփ. 24.11.15 ՀՕ-145-Ն, լրաց. 19.10.16 ՀՕ-168-Ն, 16.12.16 ՀՕ-6-Ն, փոփ., խմբ. 31.05.17 ՀՕ-84-Ն, լրաց. 17.01.18 ՀՕ-80-Ն, փոփ. 16.01.18 ՀՕ-63-Ն, լրաց., փոփ. 17.01.18 ՀՕ-44-Ն, փոփ., խմբ. 23.03.18 ՀՕ-209-Ն, փոփ., լրաց. 08.05.19 ՀՕ-32-Ն, լրաց. 10.07.19 ՀՕ-143-Ն, փոփ., լրաց. 13.09.19 ՀՕ-182-Ն, լրաց. 21.01.20 ՀՕ-20-Ն, 16.04.20 ՀՕ-247-Ն, 25.06.20 ՀՕ-342-Ն, 01.07.21 ՀՕ-292-Ն, փոփ., լրաց. 24.03.21 ՀՕ-152-Ն, փոփ. 16.12.21 ՀՕ-415-Ն, լրաց., փոփ. 14.07.22 ՀՕ-313-Ն)

(21.01.20 ՀՕ-20-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

(հավելվածը 09.06.22 ՀՕ-244-Ն օրենքի փոփոխությամբ ուժի մեջ կմտնի 2023 թվականի հունվարի 1-ից)

(հավելվածում 09.06.17 ՀՕ-104-Ն օրենքի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ հոդվածների փոփոխությունները հնարավոր չէ իրականացնել, քանի որ հավելվածն ամբողջովին խմբագրվել է 23.03.18 ՀՕ-209-Ն-ով, որտեղ բացակայում են փոփոխման ենթակա տողերն ու բառերը:)